ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ի «Պատմություն» (հիմնական դպրոց՝ շաբաթական 8,5 ժամ, ավագ դպրոց՝ շաբաթական 8 ժամ), «Կենսաբանություն» (հիմնական դպրոց՝ շաբաթական 10 ժամ, ավագ դպրոց՝ շաբաթական 8 ժամ), «Հայոց լեզու և գրականություն» (շաբաթական 15 ժամ), «Ֆիզկուլտուրա» (շաբաթական 19.5 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան) և հարցազրույց (մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. Սեպտեմբերի 1 –ից մինչև սեպտեմբերի 14 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 11^{00}-ից 14^{00}-ը բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոն և հիշատակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. սեպտեմբերի 16 –ին՝ ժամը 14^{00}-ին, «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրում, հասցե՝ ք.Երևան, Սարյան 35 :

Տեղեկությունների համար զանգահարել 56-47-32 հեռախոսահամարով :